

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ReGo
INSURANCE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ	3
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ	4
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ	5
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ	6
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	7
1. Կորպորատիվ տեղեկատվություն	7
2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքեր.....	7
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ.....	7
4. Հաշվապահական հաշվառման նշանակալի դատողություններ, գնահատականներ և դատողություններ.....	7
5. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում.....	8
6. Ապահովագրական հասույթ.....	10
7. Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր.....	11
8. Պահվող վերաապահովագրության պայմանագրերից զուտ ծախս.....	11
8.1. Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ.....	11
9. Տոկոսային եկամուտներ.....	11
10. Ֆինանսական գործիքներից եկամուտ.....	11
11. Այլ եկամուտներ.....	12
12. Այլ ծախսեր.....	12
13. Ներդրումային ակտիվներ.....	12
14. Վերաապահովագրական ակտիվներ.....	12
15. Այլ ապահովագրական պահուստներ.....	12
16. Այլ ակտիվներ.....	13
17. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ.....	13
18. Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ.....	13
19. Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ.....	13
20. Այլ պարտավորություններ.....	13
21. Բաժնետիրական կապիտալ.....	13
22. Չբաշխված շահույթ (վնաս).....	13

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

31 մարտ 2026թ.			
<p>«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62շ. 93-93/1 (ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)</p>			
Հաշվետու ժամանակաշրջանը՝ 2026թ. առաջին եռամսյակ			
Հազար ՀՀ դրամ			
Անվանում	Ծնթ.	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ		81,683	91,113
Ներդրումային ակտիվներ	13	6,428,488	6,159,136
Ապահովագրական ակտիվներ		127,354	48,771
Վերաապահովագրական ակտիվներ	14	209,042	233,487
Կանխավճարներ ձեռքբերման ծախսերի գծով		10,418	11,750
Այլ ապահովագրական պահուստներ	15	(360,854)	(16,236)
Այլ ակտիվներ	16	214,939	267,208
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	17	766,863	776,271
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		7,477,933	7,571,500
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վերաապահովագրական պայմանագրերի գծով պարտավորություններ	18	52,854	27,649
Ապահովագրական պայմանագրերի գծով պարտավորություններ	19	3,211,721	3,490,913
Այլ պարտավորություններ	20	580,310	596,968
Հետաձգված հարկային պարտավորություններ			
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		3,844,855	4,115,530
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	21	3,030,000	3,030,000
Վերազնահատման պահուստ		445,805	447,070
Կուտակված շահույթ/վնաս	22	157,243	(21,100)
Ընդամենը սեփական կապիտալ		3,633,048	3,455,970
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		7,477,933	7,571,500
Գործադիր տնօրեն	Գլխավոր հաշվապահ		
Արթուր Մկրտչյան	Ռոբերտ Մելիքյան		

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 7գ)

31 մարտ 2026թ.					
«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62շ. 93-93/1 (ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)					
Հաշվետու ժամանակաշրջանը՝ 2026 թ. առաջին եռամսյակ					
Հազար ՀՀ դրամ					
Անվանում	Ծնթ.	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական)	Նախորդ տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական)
Ապահովագրական հասույթ	6	2,093,931	2,093,931	1,434,284	1,434,284
Ապահովագրական ծառայությունների գծով ծախս	7	(1,692,609)	(1,692,609)	(1,133,535)	(1,133,535)
Պահվող վերաապահովագրության պայմանագրերից գուտ (ծախս)/ եկամուտ	8	(109,431)	(109,431)	11,232	11,232
Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք		291,891	291,891	311,981	311,981
Տոկոսային եկամուտ	9	141,721	141,721	108,384	108,384
Ֆինանսական գործիքներից եկամուտ/ (վնաս)	10	5,108	5,108	(10,688)	(10,688)
Զուտ ներդրումային եկամուտ		146,829	146,829	97,696	97,696
Զուտ ներդրումային և ապահովագրական արդյունք		438,720	438,720	409,677	409,677
Այլ եկամուտ	11	54,790	54,790	34,811	34,811
Այլ հասույթ		52,811	52,811	38,346	38,346
Փոխարժեքային տարբերությունից գուտ օգուտ/(վնաս)		(1,159)	(1,159)	(1,841)	(1,841)
Ֆինանսական ակտիվների պարտքային կորուստների գծով (ծախս)/եկամուտ		45,187	45,187	(10,025)	(10,025)
Այլ ծախսեր	12	(372,834)	(372,834)	(290,018)	(290,018)
Շահույթ մինչև հարկումը		217,515	217,515	180,950	180,950
Շահութահարկի գծով ծախս		(39,172)	(39,172)	(25,659)	(25,659)
Ժամանակաշրջանի շահույթ / վնաս		178,343	178,343	155,291	155,291
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հիմնական միջոցների վերագնահատում		445,805	445,805	-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		445,805	445,805	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		624,148	624,148	-	-
Գործադիր տնօրեն	Գլխավոր հաշվապահ				
Արթուր Մկրտչյան	Ռոբերտ Մելիքյան				

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 8)

31 մարտ 2026թ.

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62, 93-93/1

(ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու ժամանակաշրջանը՝ 2026թ. առաջին եռամսյակ

Հազար ՀՀ դրամ

Մեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ		Էմիսիոն եկամուտ/վնաս	Զբաղիված շահույթ	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստներ	Ընդամենը
	Կանոնադրական կապիտալ	Զուտ գումարը				
ՆԱԽՈՐԴ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ						
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 31 դեկտեմբերի 2024թ.	3,030,000	3,030,000	-	(681,571)	-	2,348,429
2. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) համապարփակ եկամուտ	-	-	-	155,291	-	155,291
3. Բաշխված շահաբաժիններ	-	-	-	-	-	-
4. Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժնի վճարում	-	-	-	-	-	-
5. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտի 2025թ.	3,030,000	3,030,000	-	(525,524)	-	2,504,476
ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ						
6. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առ 31 դեկտեմբերի 2025թ.	3,030,000	3,030,000	-	(21,100)	447,070	3,455,970
7. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) համապարփակ եկամուտ	-	-	-	178,343	-	178,343
8. Բաշխված շահաբաժիններ	-	-	-	-	-	-
9. Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժնի վճարում	-	-	-	-	-	-
12. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտի 2026թ.	3,030,000	3,030,000	-	157,243	445,805	3,633,048
Գործադիր տնօրեն						Գլխավոր հաշվապահ
Արթուր Մկրտչյան						Ռոբերտ Մելիքյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ

31 մարտ 2026թ.		
«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62, 93-93/1 (ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)		
Հաշվետու ժամանակաշրջանը՝ 2026թ. առաջին եռամսյակ Հազար ՀՀ դրամ		
Ցուցանիշի անվանումը	Ընթացիկ տարվա սկզբից մինչ հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչ հաշվետու ամսաթիվը
Ապահովագրության գծով ստացված ապահովագրավճարներ	2,168,111	1,763,353
Վերաապահովագրության գծով վճարված ապահովագրավճարներ	(63,835)	(38,507)
Վճարված պահանջներ և օգուտներ	(1,166,899)	(816,055)
Ձեռքբերման ծախսեր	(440,418)	(339,248)
Սուբորգացիաներ և հետ վերադարձվող գումարներ	21,277	11,972
Այլ ապահովագրական ծախսեր	(176,920)	(148,248)
Վարչական ծախսեր	(178,094)	(155,669)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Այլ ակտիվների և պարտավորությունների գուտ աճ	(49,117)	(24,026)
Գործառնական գործունեությամբ ստացված/(օգտագործված) գուտ դրամական միջոցներ՝ նախքան հարկերի վճարումը	114,105	253,572
Վճարված շահութահարկ		
Գործառնական գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր	114,105	253,572
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՅՅՐՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Տոկոսային եկամուտ	55,930	56,909
Տեղաբաշխված միջոցներ բանկերում և պարտատոմսերում	(180,000)	(349,000)
Տրված փոխառություններ	-	-
Շահույթ կամ վնասի միջոցով վերաչափվող ֆինանսական գործիքների ձեռքբերում/վաճառք	600	750
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք և վաճառք	70	64
Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(123,400)	(291,277)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ նվազում / աճ	(9,295)	(37,705)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(135)	(435)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	91,113	97,530
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	81,683	59,390
Գործադիր տնօրեն	Գլխավոր հաշվապահ	
Արթուր Մկրտչյան	Ռոբերտ Մելիքյան	

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Ժամանակաշրջան – 2026 թվական առաջին եռամսյակ

Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ն (իրավանախորդ «ՌԵՍՈ» ԱպահովագրականՓԲԸ)՝ (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է հիմնադիրների (բաժնետերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն 22 նոյեմբերի 2008 թ. Կնքված հիմնադիր պայմանագրի: Ընկերությունը տրամադրում է ապահովագրական ոլորտի ծառայությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, Կոմիտասի պող. 62 շ., 93-93/1 հասցեում: 2022թ. Ընկերության ինտերնետային կայքի հասցեն է՝ www.regoinsurance.am :

Ընկերության կանոնադրական կապիտալը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում է 3,030,000,000 (երեք միլիարդ երեսուն միլիոն) ՀՀ դրամ: Ընկերության բաժնետերերն է հանդիսանում «Պոլիգրաֆիա» ՓԲԸ-ն (նախկին բաժնետեր «ԷՍՋԻԱՅ-Ինվեստ» ՍՊԸ իրավահաջորդ) 100 % բաժնեմասով:

Ընկերությունը 10.11.2008 թ-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ստացել է ոչ կյանքի ապահովագրության հինգ ապահովագրական դասերով գործունեության իրականացման թիվ ԱՊՈ 0010 լիցենզիա: Հետագայում 25.08.2009թ-ին ավելացվել են թվով հինգ, իսկ 04.08.2017թ.-ին թվով երկու ապահովագրական նոր դասեր: Ներկայումս Ընկերությունը իրականացնում է ապահովագրական գործունեություն հետևյալ ապահովագրական դասերի գծով՝

- ✓ Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն,
- ✓ Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,
- ✓ Դժբախտ պատահարներից ապահովագրություն,
- ✓ Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,
- ✓ Գույքին հասցված այլ վնասների ապահովագրություն,
- ✓ Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- ✓ Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն,
- ✓ Ֆինանսական վնասի ապահովագրություն,
- ✓ Առողջության ապահովագրություն,
- ✓ Աջակցության ապահովագրություն,
- ✓ Օդանավերի ապահովագրություն,
- ✓ Օդանավերի (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:

2026 թվականի մարտի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմել է 90 աշխատակից:

2026 թվականի մարտի 31-ի դրությամբ Ընկերության գործակալների թիվը կազմել է 105, որից ֆիզիկական անձ գործակալների թիվը կազմում է 3:

Ծանոթագրություն 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) և ինչպես նաև ՖՀՄՍ 17 պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ իրականարժեքով չափվող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների: Տնտեսական գործառնությունները ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ դրամական միջոցների շարժը ներկայացնող հաշվետվության, ներկայացվել են հաշվեգրման սկզբունքի հիման վրա: Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Ընկերության կողմից պահանջվել են անընդհատության, ներկայացման հետևողականության, էականության և համադրելի տեղեկատվության սկզբունքները: Ֆինանսական հաշվետվությունների արժեքների ներկայացման արժույթ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ Դրամը: Արժեքների թվաբանական մեծությունները ներկայացվել են հազար դրամներով: Արտարժույթով ներկայացված ակտիվները և պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատվել են՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված հաշվարկային փոխարժեքները:

Ծանոթագրություն 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ֆինանսական հաշվետվությունների կազմման հիմք հանդիսացող Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը նույնն է, ինչ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար կազմված ֆինանսական հաշվետվությունների համար կիրառված քաղաքականությունը:

Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման նշանակալի դատողություններ, գնահատականներ և դատողություններ

Հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների, պարտավորությունների, եկամուտների, ծախսերի, հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումների մի շարք գնահատումներ և դատողություններ, որոնք պարբերաբար վերանայվում են: Գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են փոփոխման ժամանակաշրջանում և յուրաքանչյուր հաջորդ ժամանակաշրջանում, որի վրա նշված փոփոխություններն ազդում են:

Ծանոթագրություն 5. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս կիրառվել են ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հետևողականորեն պահպանվել են հաշվապահական հաշվառման բոլոր կետերը:

ա. Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Ընկերության եկամուտները և ծախսերը հաշվառվել և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են հաշվեգրման սկզբունքով: Ընդ որում պահպանվել է եկամուտների և ծախսերի ճանաչման համապատասխանությունը: Մասնավորապես, ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց հասույթի և այդ ծառայությունների մատուցման համար իրականացված ծախսումների հաշվեգրումը կատարվել են միաժամանակ այն ժամանակշրջանի ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

Ապահովագրական պայմանագրեր, դրանցից բխող եկամուտներ և ծախսեր

Ապահովագրական պայմանագիրը պայմանագիր է, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) իր վրա է վերցնում պայմանագրի մյուս կողմի (ապահովադրի) նշանակալի ապահովագրական ռիսկը՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե պայմանագրով սահմանված դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա: Ընկերությունը իր հիմնական գործունեությունից ստացված եկամտի հիմնավորող փաստաթուղթ է համարում թողարկված ապահովագրական վկայագիրը: Ընդ որում, վկայագրերի թողարկման և եկամուտների ճանաչման ամսաթիվ է համարվում հետևյալ երկու ամսաթվերի՝ վկայագրերի թողարկման (վավերացման) և վկայագրերի գործողության սկզբի ամսաթվերից առավելագույնը: Ապահովագրական վկայագրերի հետագա փոփոխությունները իրականացվում են ապահովագրական վկայագրերի անբաժանելի մաս կազմող համաձայնագրերի թողարկումով, որոնց գծով առաջացող եկամուտները և ծախսերը նույնպես ճանաչվում են համաձայնագրերի թողարկման (վավերացման) և համաձայնագրերի գործողության մեջ մտնելու ամսաթվերից առավելագույնով: Վերապահովագրության գծով ծախսերը ընկերության կողմից հաշվեգրվում են ապահովագրական վկայագրերի թողարկման հետ գույքահեռ: Ոչ ռեզիդենտ վերապահովագրողին հաշվեգրված վերապահովագրավճարների գծով բյուջեի նկատմամբ առաջացող պարտավորությունները Ընկերության կողմից ճանաչվում են միայն դրանց փաստացի փոխանցման ժամանակ: Համախառն ապահովագրավճարներից հաշվեգրված եկամուտը Ընկերությունը ճշգրտում է չվաստակաձագապահովագրավճարների մասով, որը նախատեսվում է վաստակել հաջորդ կամ հետագա ֆինանսական ժամանակաշրջանում՝ ձևավորելով Չվաստակաձագապահովագրավճարների պահուստ, որը հաշվարկվում է առանձին յուրաքանչյուր ապահովագրական պայմանագրի համար, կիրառելով օրական համամասնական մեթոդը, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում է՝ պայմանագրի գործողության ժամկետում ռիսկի աստիճանի փոփոխություններն արտացոլելու համար:

Ապահովագրական հայտեր

Հայտերի հետ կապված ծախսերը ներառում են կարգավորված և չկարգավորված հայտերի կարգավորման ծախսերը, որոնք առաջացել են տվյալ ֆինանսական ժամանակաշրջանում տեղի ունեցած դեպքերից՝ նախորդ ժամանակաշրջանի հայտերի պահուստի ճշգրտումների հետ միասին: Հաշվետու ժամանակաշրջանում չկարգավորված հայտերի գծով Ընկերությունը ձևավորում է Ներկայացված, սակայն չվճարված պահանջների պահուստ (ՆՉՊՊ), ինչպես նաև Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստ (ՏՉՊՊ)՝ համաձայն ՀՀ ԿԲ կողմից և Ընկերությունում ընդունված ներքին իրավական ակտերի և կանոնակարգերի:

Ձեռքբերման ծախսեր

Ապահովագրական պայմանագրերի ձեռքբերման հետ կապված ծախսերը կապիտալացվում են և ամորտիզացվում դրանց համապատասխան պայմանագրի գործողությանը գույքնթաց: Ձեռքբերման ծախսերը ներառում են այնպիսի ծախսեր, ինչպիսիք են միջնորդավճարները և նախնական գնման հետ կապված ծախսերը:

բ. Արտարժույթային փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը

Արտարժույթով գործարքը սկզբնական ճանաչման պահին գրանցվում է ՀՀ դրամով արտարժույթի նկատմամբ կիրառելով ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում գործարքի օրը հրապարակված հաշվարկային փոխարժեքով: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

- 1) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվել են՝ կիրառելով փակման փոխարժեքը,
- 2) արտարժույթով սահմանված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են ՀՀ դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ, երբ Ընկերության դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են եկամուտ կամ ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Դրամային հոդվածների վերագնահատումը ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված հաշվարկային միջին փոխարժեքով կատարվում է յուրաքանչյուր անգամ ԿԲ-ի կողմից արտարժույթների հաշվարկային փոխարժեքները հրապարակելիս: 2026թ.-ի մարտի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում հրապարակված հետևյալ հաշվարկային փոխարժեքները՝

- 1 ԱՄՆ Դոլլար – 377.16 ՀՀ դրամ
- 1 Եվրո – 432.19 ՀՀ դրամ

գ. Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Շահույթի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինեն հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ապագա ժամանակաշրջաններում բյուջե վճարման (բյուջեից փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է՝ կապված՝

ա) ժամանակավոր տարբերությունների, որը իրենից ներկայացնում է ակտիվի (պարտավորության) հաշվեկշռային և հարկային արժեքների տարբերությունը, կամ

բ) չօգտագործված հարկային վնասը և (կամ) գեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Հետաձգված հարկային պարտավորություն ճանաչվել է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները կամ հարկային վնասը:

դ. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, ՀՀ ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցները:

գ. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Գործող վարձակալված ակտիվները Ընկերության կողմից արտահաշվեկշռում ցույց են տրված իրական արժեքով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի գծով վարձակալության ծախսերը հաշվեգրվել են:

Մաշվածությունը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձման ամսաթվից: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության և վարձակալության ժամկետներից նվազագույնի ընթացքում: Օգտակար ծառայության սահմանված ժամկետները հետևյալն են՝

- ✓ տնտեսական գույքի համար – 5 տարի,
- ✓ համակարգչային սարքավորումների համար – 3 տարի,
- ✓ տրանսպորտային միջոցների համար – 5 տարի,
- ✓ այլ հիմնական միջոցների համար – 1-5 տարի:

Մինչև 50,000 (հիսուն հազար) ՀՀ Դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Հետագա ծախսումները, որոնք վերաբերվել են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացվել են ակտիվի հաշվեկշռի արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ կլինեն, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից: Մյուս բոլոր հետագա ծախսումները ճանաչվել են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի:

է. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքները ճանաչվում են հաշվեկշռում, երբ Ընկերությունը դառնում է տվյալ ֆինանսական գործիքի առնչությամբ կնքված պայմանագրի կողմ: Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, եթե ֆինանսական ակտիվներից առաջացած դրամական հոսքերի նկատմամբ Ընկերության պայմանագրային իրավունքների ժամկետն ավարտվում է կամ, եթե Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվները այլ անձանց՝ չպահպանելով դրանց նկատմամբ վերահսկողությունը կամ ակտիվների հետ կապված բոլոր նշանակալի ռիսկերը և արտոնությունները: Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, եթե պայմանագրով սահմանված Ընկերության պարտավորությունների ժամկետն ավարտվում է կամ այդ պարտավորությունները մարվում են կամ չեղյալ են համարվում:

Ընկերության կողմից տնօրինվող ֆինանսական գործիքներն ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք չափվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից տնօրինող ֆինանսական գործիքներն ընդգրկում են ներդրումները բաժնային և պարտքային արժեթղթերում, ապահովագրության գծով և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրական գծով և այլ կրեդիտորական պարտքերը, այլ պարտավորությունները:

Սկզբնական չափումից հետո իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասակարգված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Այլ ֆինանսական ակտիվները, ինչպիսիք են Դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրության գծով և այլ դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով՝ էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած ցանկացած արժեզրկումից կորուստ:

Ծանոթագրություն 6. Ապահովագրական հասույթ	Հաշվետու Ժամանակաշրջան	Որից		Նախորդ տարվա հաշվետու Ժամանակաշրջան	Որից	
		Համախառն ապ. վճարներ	Վերապահո վագրողներին փոխանցված վերապ. վճարներ		Համախառն ապ. վճարներ	Վերապահովագ րողներին փոխանցված վերապ. վճարներ
· Դժբախտ պատահարներից ապահովագրություն	300,785	287,806	20,749	118,909	251,299	14,718
· Առողջության ապահովագրություն	112,750	52,098	-	115,241	166,879	-
· Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	102,637	111,870	46,195	87,333	87,924	22,147
· Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	26,901	30,758	5,024	19,823	20,585	3,691
· Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	102,313	115,740	78,194	87,615	100,512	28,613
· Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	9,028	4,254	152	7,033	13,036	1,540
· Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	1,309	1,151	-	506	1,147	-
· Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	6,535	12,410	8,215	12,132	12,091	8,257
· Երաշխիքի տրամադրում	-	-	-	-	-	-
· Ֆինանսական վնասների ապահովագրություն	7,011	6,243	-	7,369	1,384	-
· Աջակցության ապահովագրություն	38,659	38,205	-	15,634	11,726	-
· Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն ԱՊՊԱ	1,386,003	1,496,319	-	962,689	1,202,065	-
Ընդամենը	2,093,931	2,156,854	158,529	1,434,284	1,868,648	78,966

Ծանոթագրություն 7. Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Որից համախառն հատուցումներ	Նախորդ տարվա հաշվետու ժամանակաշրջան	Որից համախառն հատուցումներ
· Դժբախտ պատահարներից ապահովագրություն	143,509	4,400	50,457	405
· Առողջության ապահովագրություն	140,708	105,944	114,219	118,737
· Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	65,304	54,312	(23,817)	8,273
· Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	6,248	626	88,143	329
· Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	24,538	-	19,922	17,883
· Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	1,808	-	3,217	-
· Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	655	-	247	-
· Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	728	-	1,669	-
· Երաշխիքի տրամադրում	-	-	-	-
· Ֆինանսական վնասների ապահովագրություն	437	-	233	-
· Աջակցության ապահովագրություն	18,567	503	12,528	3,144
· Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն ԱՊՊԱ	1,290,107	985,239	866,717	628,178
· <i>Հատուցումների կարգավորման ծախսեր</i>	-	-	-	-
Ընդամենը	1,692,609	1,151,024	1,133,535	776,949

Ծանոթագրություն 8. Պահվող վերաապահովագրության պայմանագրերից զուտ ծախս	Հաշվետու ժամանակաշրջան	Որից վերաապահովագրողներին փոխանցված ապ. վճարներ	Նախորդ տարվա հաշվետու ժամանակաշրջան	Որից վերաապահովագրողներին փոխանցված ապ. վճարներ
· Դժբախտ պատահարներից ապահովագրություն	10,059	20,749	7,024	14,718
· Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	19,393	46,195	29,259	22,147
· Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	4,847	5,024	(73,449)	3,691
· Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	72,754	78,194	18,676	28,613
· Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	152	152	1,540	1,540
· Երաշխիքի տրամադրում	(4,599)	-	-	-
· Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	3,527	8,215	8,257	8,257
· Ֆինանսական վնասների ապահովագրություն	3,298	-	-	-
Ընդամենը	109,431	158,529	(11,232)	78,966

Ծանոթագրություն 8.1. Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա հաշվետու ժամանակաշրջան
· ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	32,918	3,835
· փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	-	-
· հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	-	15,627
· գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	-	-
Ընդամենը	32,918	19,462

Ծանոթագրություն 9. Տոկոսային եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա հաշվետու ժամանակաշրջան
· Եկամուտներ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով	102,444	90,446
· Եկամուտներ բանկային և այլ հաշիվներից	103	91
· Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական արժեթղթերի գծով	8,877	17,847
· Եկամուտներ վարկային կազմակերպություններին տրված փոխառություններից	30,297	-
Ընդամենը	141,721	108,384

Ծանոթագրություն 10. Ֆինանսական գործիքներից եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա հաշվետու ժամանակաշրջան
· Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներից եկամուտներ	5,108	(10,688)
Ընդամենը	5,108	(10,688)

Ծանոթագրություն 11. Այլ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա հաշվետու ժամանակաշրջան
· Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	-	-
· Դժբախտ պատահարներից ապահովագրություն	-	-
· Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն ԱՊՊԱ	38,981	16,259
· Առողջության ապահովագրություն	-	-
· Օդանավերի ապահովագրություն	-	-
· Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	14,586	9,991
· Աջակցության ապահովագրություն	-	-
· Այլ	1,223	8,561
Ընդամենը	54,790	34,811

Ծանոթագրություն 12. Այլ ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա հաշվետու ժամանակաշրջան
· Ծախսեր անձնակազմի գծով	124,427	109,498
· Վարձակալության ծախսեր	251	179
· Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	11,094	7,193
· Ծրագրի սպասարկման և պահմանման գծով ծախսեր	15,876	13,620
· Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	1,503	1,503
· Հասարակական կապերի գծով ծախսեր	21,147	3,848
· Կապի և հաղորդակցության միջոցների ծախսեր	2,293	3,020
· Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով	5,723	6,363
· Տրանսպորտի և գործուղման ծախսեր	2,276	59
· Անդամավճարներ	7,157	930
· Գրասենյակային ծախսեր	1,254	586
· Տույժեր և տուգանքներ	-	-
· Կոմունալ ծախսեր	1,295	1,247
· Այլ վարչական ծախսեր	178,538	141,972
Ընդամենը	372,834	290,018

Ծանոթագրություն 13. Ներդրումային ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
· ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր	1,602,633	1,570,317
· Բանկային հաշիվներում տեղաբաշխված ավանդներ	4,502,184	4,274,024
· Վարկային կազմակերպություններին տրված փոխառություններ	300,000	300,000
· Վարկային կազմակերպություններին տրված փոխառությունների գծով տոկոսներ	23,671	14,795
Ընդամենը	6,428,488	6,159,136

Ծանոթագրություն 14. Վերաապահովագրական ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
· Վերաապահովագրական ակտիվներ	415,790	372,205
· Վերաապահովագրական պարտավորություններ	(206,748)	(138,718)
Ընդամենը	209,042	233,487

Ծանոթագրություն 15. Այլ ապահովագրական պահուստներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
· Ընդհանուր պահուստ/բանկերի և այլ հաշիվների	-	-
· Հատուկ պահուստ	-	-
· Ընդհանուր պահուստ/սուբրոգացիայի գծով	-	-
· Հատուկ պահուստ/ սուբրոգացիայի գծով	(23,228)	(16,236)
· Վերաապահովագրության գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	-	-
· Բնուսների և զեղչերի պահուստ	(861)	-
· Այլ պահուստներ	(336,765)	-
Ընդամենը	(360,854)	(16,236)

Ծանոթագրություն 16. Այլ ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
· Ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով	7,287	10,728
· Կանխավճարներ մատակարարների	40,186	48,281
· Կանխավճարներ շահութահարկի գծով	98,195	62,195
· Կանխավճարներ բժշկական կազմակերպություններին	-	2,674
· Կանխավճարներ հարկերի գծով	988	977
· Ստացվելիք գումարներ՝ սուբրոգացիայի գծով	46,456	32,473
· Ապահովադիրներից և Սուբրոգացիայի պահանջներից ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(43)	(48)
· Կանխավճարներ պահանջների գծով	-	79,502
· Այլ ակտիվներ	21,870	30,426
Ընդամենը	214,939	267,208

Ծանոթագրություն 17. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
· Հիմնական միջոցներ	875,898	877,538
· Ոչ նյութական հիմնական միջոցներ	47,868	47,868
· Հիմնական միջոցների ամորտիզացիա	(112,030)	(106,276)
· Ոչ նյութական հիմնական միջոցների ամորտիզացիա	(44,873)	(42,859)
Ընդամենը	766,863	776,271

Ծանոթագրություն 18. Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	52,854	27,649
Ընդամենը	52,854	27,649

Ծանոթագրություն 19. Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
· Ուղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	(255,505)	(275,796)
· Ընթացիկ Պահուստ	3,852,574	4,097,182
· Հետաձգված ծախսեր միջնորդավճարների գծով	(724,514)	(718,308)
· Ապագա ժամանակաշրջանի այլ ծախսեր	(16,389)	(21,122)
· Վճարվելիք միջնորդավճարներ ապահովագրական միջնորդներին	259,939	325,138
· Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ ապահովագրության գծով	(13,487)	(16,319)
· Ուղղակի ապահովագրության գծով վճարվելիք գումարներ	93,381	84,437
· Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ	15,722	15,701
Ընդամենը	3,211,721	3,490,913

Ծանոթագրություն 20. Այլ պարտավորություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
· Հիմնական և պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ	12,050	125,017
· Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ	55,623	72,432
· Կրեդիտորական պարտքեր հարկերի և տուրքերի գծով	10,006	13,925
· Վճարվելիք շահութահարկ	-	-
· Վճարվելիք արտոնյալ շահաբաժիններ	235,682	196,510
· Կրեդիտորական պարտավորություններ Բյուրոյի նկատմամբ	271	30
· Այլ ընթացիկ պարտավորություններ	214,919	143,307
· Այլ ընթացիկ պահուստներ	51,759	45,747
Ընդամենը	580,310	596,968

Ծանոթագրություն 21. Բաժնետիրական կապիտալ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
· Սովորական բաժնետոմսեր	2,444,000	2,444,000
· Արտոնյալ բաժնետոմսեր	586,000	586,000
Ընդամենը	3,030,000	3,030,000

Ծանոթագրություն 22. Չբաշխված շահույթ (վնաս)	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան առ 31.12.2025
<ul style="list-style-type: none"> · Ընթացիկ տարվա · Նախորդ տարվա · Հաշվարկված դիվիդենտ 	<p style="text-align: center;">178,343</p> <p style="text-align: center;">(21,100)</p> <p style="text-align: center;">-</p>	<p style="text-align: center;">713,211</p> <p style="text-align: center;">(681,571)</p> <p style="text-align: center;">(52,740)</p>
Ընդամենը	157,243	(21,100)